ՄԱՄՈՒԼԻ ԱՍՈՒԼԻՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ԼՈՆԴՈՆ, 11 հոկտեմբերի (ՏԱՍՍ-ի թղթ.)։ Հայաստանի ու Ադրբեջանի հարաբերություններում, ինչպես նաև ԼՂԻՄ-ի առնչությամբ ստեղծված կացությունը արծարծվեց Խորհրդային և օտարերկրացի ժուռնալիստների համար կազմակերպված մամուլի ասուլիսում, որը այսօր կայացավ Մոսկվայում ԽՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի մշտական ներկայացուցչությունում։

Հայաստանի մշտական ներկայացուցիչ Է. Հայկազյանը հաղորդեց, որ սեպտեմբեր-հոկտեմբերին հանրապետությունը չի ստացել իր հացեով առաքված ավելի քան երկու միլիոն տոննա ժողովրդատնտեսական բեռ, որից մեկ միլիոն 200 տոննան նախատեսված է երկրաշարժից տուժած շրջանների համար։

Շրջափակման հետևանքով, շարունակեց նա, Հայաստանի մնայն արդյունաբերության կոմբինատները կազմում են 200 միլիոն ռուբլի։ Տեղ չեն հասել 130 միլիոն ռուբլու ժողովրդական սպառման ապրանք և պարենամթերք։ Ճանապարհին են մնացել հագարավոր տոննաներով բենզին, դիզելային վառելիք, մազութ։ Դժվարություններ են ստեղծվել բերքը դաշտից տեղափոխելու գործում։

ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ Բ. Դադամյանը ընդգծեց. Մենք չենք համարում, թե մեղավորը ադրբեջանական ժողովուրդն է։ Պատասխանատվությունը ամբողջովին ընկնում է նրանց վրա, ովքեր գիտակցաբար ազգամիջյան գժտություն են բորբոքում մեր ժողովուրդների միջև։

Հայկական ԽՍՀ-ից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները ընդգծեցին, որ անհրաժեշտ է մշակել ստեղծված կացությանը վերջ տալու միասնական մեխանիզմ։

°°°

Հոկտեմբերի 11-ին Մոսկվայում Հայաստանի մշտական ներկայացուցչությունում տեղի ունեցավ մամուլի ասուլիս խորհրդային և օտարերկրացի լրագրողների համար։ Դրա նպատակն էր մասսայական լրատվության միջոցների ներկայացուցիչներին ծանոթացնել ԼՂԻՄ-ի և Հայաստանի դեպուտատների դիրքորոշմանը Լեռնային Ղարաբաղի վերջին դեպքերի կապակցությամբ։

Լրագրողների առջև ելույթ ունեցան Հայաստանից և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ Խ. Աբրահամյանը, Լ. Հարությունյանը, Զ. Բալայանը, Վ. Գաբրիելյանը, Բ. Դադամյանը, Գ. Ենոքյանը, Հ. Իգիթյանը, Ս. Սարգսյանը, Ս. Խանզադյանը։

ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին հասցեագրված դիմումը ընթերցեց ժողովրդական դեպուտատ Զ. Բալայանը։ Դիմումի մեջ մասնավորապես ասված է.

Լեռնային Ղարաբաղի առանց այդ էլ տագնապալի իրավիճակը կտրուկ սրվեց Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանի կողմից հանրապետության սուվերենության մասին օրենքի ընդունումից հետո, որի համաձայն Ադրբեջանը ոչ միայն իրեն իրավունք է վերապահում դուրս գալ երկրից, այլև ԽՍՀՄ-ից անջատվելու մշակված մեխանիզմի համաձայն իր հետ դուրս է քերում Ղարաբաղի և Նախիջևանի հայկական ինքնավար կազմավորումները, ինչպես նաև հայաբնակ վարչական շրջանները։ Այսպիսի պայթյունալի ժամանակաշրջանում նման միտումնավոր սադրիչ փաստաթղթի հրապարակումն իրոք կրակին յուղ է ավելացնում։ Այն փաստը, որ պաշտոնական կուսակցական ու պետական մարմինները ռևանշիստական (ինչպես որ դա ի դեպ եղավ Մերձբալթիկայի հետ կապված համանման իրավիճակում) անհրաժեշտ քաղաքական և իրավաբանական գնահատական չտվեցին, Ղարաբաղում, Հայկական ԽՍՀ-ում, երկրի լայն հասարակության շրջանում ակամա ընկալվեց որպես կենտրոնի հետ վաղօրոք համաձայնեցված ձեռնարկում։

Մենք՝ Լեռնային Ղարաբաղից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներս, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին ենք դիմում, պահանջելով քաղաքական գնահատական տալ Ադրբեջանում ընդունված հակասահմանադրական օրենքին, որն ուղղված է ազգային փոքրամասնությունների դեմ, քաղաքական գնահատական տալ շրջափակմանը և ռեգիոնում տեղի ունեցող բոլոր սադրանքներին։ Դիմում ենք ԽՍՀՄ Գերագույն խորհրդին, պահանջելով անհապաղ բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկել Ղարաբաղի հայ բնակչության դեմ կազմակերպված հանցագործությունները կանխելու նպատակով։ Պահանջում ենք ստեղծել Ստեփանակերտում կատարված հրեշավոր հանցագործության և մարզի այլ վայրերում կատարված հանցագործությունների հետաքննության դեպուտատական հանձնաժողով, պատասխանատվության կանչել հանցագործությունների կազմակերպիչներին և անմիջական կատարողներին։

Մենք խորհրդային ժողովրդին, միջազգային հասարակայնությանը խնդրում ենք փորձել իմաստավորել և գիտակցել, որ Արցախի հայ բնակչությունը ուզում է ընդամենը մշակել այն հողը, որը հազարամյակներ շարունակ մշակել են հայրերն ու որդիները, ուզում է իր որդիներին մեծացնել հայրենիքի խաղաղ երկնքի տակ, ուզում է դարեդար մնալ հայ ժողովուրդ, ուզում է փրկել վերակառուցումը, դրանում տեսնելով աշխարհի փրկությունը։

ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատները պպատասխանեցին լրագրողների բազմաթիվ հարցերին։

(Արմենպրես)